

3048

ԲԵՐԲԵՐԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԲԱԲԵԼՈՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

208

S-46

20 AUG 2013

17 SEP 2009

208

5-46

ԲԵՐԲԵՐԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԲԱՐԵԼՈՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

ՅԱԿԵԼՈՒԱԾ

ԳԻԼԳԱՄԷՇԻ ՎԷՊԸ



ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ

Լիցենզիատ Աստուածաբանութեան
և Դոկտոր փիլիսոփայութեան.



Ս. ԷՋՄԻԱՇԻՆ

Տպարան Մայր Աթոռոյ

1908

1006
26847

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ — ՄԱՐԳԱՐԱՆԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

Երուանդ Լալայեանից

Արսասպած Արարաւ Ամսագրից

1908 № 3

ԲԱԲԵԼՈՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐԳ*

Վերջին տարիներս քաղաքակիրթ աշխարհի հետաքրքրութիւնը աւելի և աւելի կենդրոնանում է Միջագետքի վրայ, ուր մի ժամանակ բարձր զարգացման հասած քաղաքակրթութիւն է եղել, և աւելի յաճախ լսելի են դառնում ex oriente lux = Արևելքից է լոյսը գալիս խօսքերը։ Այդ մեծ հետաքրքրութեան պատճառը մի կողմից այն է, որ բաբելոնական քաղաքակրթութիւնը մինչև այսօր էլ ազդեցութիւն է գործում մեր հասկացողութիւնների վրայ։ Իսկ միւս կողմից, և աւելի մեծ չափով այն, որ բաբելոնական քաղաքակրթութիւնը ամենասերտ կապերով կապուած է Իսրայէլի ժողովրդի, ուրեմն նաև Հին Կտակարանի հետ։ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Ամերիկան, ուր այնքան տարածուած է Ս. Գրքի ընթերցանութիւնն ու ուսումնասիրութիւնը, մըըցում են միմեանց հետ գիտական էքսպեդիցիաներ կազմելով, որպէս զի հնարաւոր լինի ընդարձակ պեղումներ կատարել և լոյս աշխարհ հանել այն քաղաքակրթութեան գրաւոր մնացորդները, որ կարելի է ասել մեր այժմեան քաղաքակրթութեան հիմքն է կազմում, և որը այնքան առատ լոյս է սփռում արդէն Ս. Գրքի շատ անհասկանալի տեղերի վրայ, և մեզ գլխաւորապէս միջոց է տալիս ըմբռնելու այն զրոյցներն ու առասպելները աշխարհի

*) Դասախօսութիւն, կարդացուած ձեմարանում անցեալ Յունուարի 29-ին։ Դիտաւոր աղբիւրները, որոնցից քաղուած է ամբողջ նիւթը, հետեւեալներն են. H. Zimmern, Biblische und babylonische Urgeschichte. Leipzig, 1901; H. Gunkel, Israel und Babylonien. Göttingen, 1903; E. Schrader's Keilinschriften und das Alte Testament, 3. Auflage von H. Zimmern und H. Winckler. Berlin, 1903.

ստեղծագործութեան և առաջին մարդկանց մասին, որոնք պատմուած են Մենդոց գրքի առաջին 11 գլուխներում:

Սեպագիր արձանագրութիւնների ընթերցումը մարդկային մաքի ամենահոյակապ գործերից մէկն է. նրա շնորհիւ մեր հասկացողութիւնը հին և հնագոյն արեւելքի մասին կարելի է ասել վճռական կերպով փոխուել է: Մինչ նախորդ սերունդների գիտնականները ստիպուած էին հին արեւելքի պատմութեան համար բաւականապէս Ս. Գրքի և յոյների տուած կցկտուր տեղեկութիւններով, այսօր մենք հնարաւորութիւն ունինք արեւելքը ճանաչելու իւր իսկական աղբիւրներից. իսկ այդ աղբիւրները սկսուած են ամենաքիչը 3000 թուականին Ք. Ա. Երկու հազար տարով ընդարձակուած է մեր աչքի առաջ պատմութիւնը և մենք տեսնում ենք, թէ ինչպէս այդ մեծ ժամանակամիջոցում ազգեր են ծաղկում ու անհետանում, հսկայական տիեզերական աշխարհակալ պետութիւններ են յառաջ գալիս և կռիւ մղում միմեանց հետ իշխանութեան համար: Եւ այդ բոլոր ժամանակը արեւելքի կենդանի Բաբելոնն է: Այստեղ արդէն 3000 թուականին մի քաղաքակրթութիւն է տիրում ամենածաղկած դրութեան մէջ, որի սկզբնաւորութիւնը անյիշատակ ժամանակներից է: Այդ կուլտուրայի հիմնադիրներն են Սուսերները, հաւանօրէն Միջին-Ասիայից գաղթած մի ժողովուրդ. սեմական բաբելոնացիք այդ քաղաքակրթութեան աշակերտներն ու շարունակողներն են միայն: Բայց Բաբելոնից տարածուած է այն ամբողջ արեւելքում և մինչեւ Եգիպտոս է հասնում: Բաբելոնը արեւելքում այն գիրքն է ստանում, ինչ որ հազարաւոր տարիներ յետոյ Հռոմը արեւմուտքում: Մի քանի օրինակներ բաւական են պարզելու համար այդ քաղաքակրթութեան նշանակութիւնը: Մի քանի տարի միայն առաջ գիտական աշխարհը յանկարծ պարզեւ ստացաւ Բաբելոնի թագաւոր Համուրաբի օրէնագիրքը (2250): Այդ օրէնագրքի մէջ նկարագրուած սոցիալական դրութիւնը շատ աւելի բարդ է և օրինական յարաբերութիւնները շատ աւելի առաջ զննցած են, ա-

ւելի խորը քաղաքակրթութեան հետեւանք, քան թէ մենք տեսնում ենք Մովսիսական օրէնքի մէջ: Օրինակ Բաբելոնում արդէն վաղուց վերացած է արեւան վրէժխնդրութիւնը, այն ինչ այն գոյութիւն ունի դեռ Իսրայէլի մէջ: Որքան բարձր աստիճանի վրայ էր կանգնած բաբելոնական քաղաքակրթութիւնը, երևում է այն հանգամանքից, որ Համուրաբի օրէնագրքի մէջ բժիշկների համար վարձատրութեան որոշ չափ, տաքսա է նշանակուած: Եւ այդ օրէնքները կազմուած են, ի մի են ժողովուած 2250 թուին, որից 1000 տարի յետոյ էլ դեռ Իսրայէլի ժողովուրդը գոյութիւն չունէր: Բաբելոնական քաղաքակրթութեան տարածման և ազդեցութեան մի այլ փառաւոր ապացոյց տալիս են մեզ 1887 թուին Եգիպտոսի Տել-Ամարնայում գտնուած կաւէ տախտակները: Այստեղ Ա. մենոփիս Դ-ի արխիւում գտնուեցին Բաբելոնի, Ասորեստանի, Միջագետքի, Կիպրոսի, այլ և Քանանի վաստալ թագաւորների նամակները Եգիպտոսի փարաւոններին ուղղուած: Այդ նամակները գրուած են բաբելոնական լեզուով. ուրեմն Բաբելոնի լեզուն եղել է ժամանակի դիւանագիտական լեզուն. մինչև անգամ Քանանի փոքրիկ թագաւորները, որոնք ենթարկուած էին Եգիպտոսին, իրենց նամակները չեն գրում եգիպտական մատերիալ պապիրոսի վրայ, այլ գործ են ածում բաբելոնական կաւէ տախտակները և գրում են բաբելոներէն: Ասորիքն ու Քանանը ուրեմն ճիշտ նոյն ձևով գտնուել են բաբելոնական քաղաքակրթութեան ազդեցութեան տակ, ինչպէս 18-րդ դարում ամբողջ կրթութեան աշխարհը և նրա հետ միասին դիւանագէտները Ֆրանսերէն էին խօսում: Այդ նամակագրութիւնը 1500|1400 թուականներից է: Քանանը կուլտուրայի տեսակէտից բաբելոնական մի նահանգ էր Իսրայէլի ժողովրդի այնտեղ մտնելուց առաջ: Մի այլ պատկեր. յետագայ ժամանակներում, երբ հանդէս են գալիս պարսիկները, յոյներն ու հռոմայեցիք, ազգերը խառնուում են և կրօնական հասկացողութիւնները միանում, այդտեղ էլ դեռ դեր են կատարում բաբելոնական

ըմբռնումները: Եթէ այստեղ խօսք է լինում Եօթը ամենամեծ հանճարների կամ աստուածների մասին, պէտք է չմոռանալ, որ դժբա բարեւոնական 7 մոլորակների աստուածութիւններն են, որ յետոյ հրէական և քրիստոնէական աւանդութեան մէջ շարունակում են իրենց գոյութիւնը իբրև 7 ամենաբարձր հրեշտակներ կամ հրեշտակապետներ: Բայց դեռ այսօր էլ, թէև թոյլ կերպով, մի քանի բաներ յիշեցնում են մեզ բարեւոնական իմաստութիւնը: Բարեւոնացիք են եղել մեր քաղաքակրթութեան ուսուցիչները գլխաւորապէս աստղագիտութեան և այն ամեն բաների մէջ, որոնք կապ ունին դրա հետ՝ մատենատիրայի և չափերի մէջ: Երկնային էքուատորը այսօր էլ բաժանում է համաձայն 12 կենդանակերպերի, և շրջագիծը 360 աստիճանի. արդի քրիստոնեայ ազգերը շաբաթուայ 7 օրերը կոչում են բարեւոնական 7 մոլորակների անունով (Sonntag, Montag, Mardi, Mercredi, Donnerstag, Freitag, Saturday): Մինչև անգամ մեր այժմեան ժամացոյցների 12-ի բաժանումը, ինչպէս և ժամի բաժանումը 60 մասի կապուած է հին բարեւոնական աստեղային հաշիւների հետ:

Բոլորովին ակներև է Բարեւոնի քաղաքակրթութեան ազդեցութիւնը Խորայէլի վրայ. ամենից առաջ Խորայէլի մէջ չափը, կշիռն ու փոշն բոլորովին բարեւոնական է. Խորայէլի մէջ ևս սուրբ թուեր են 7 և 12, որոնք Բարեւոնում կապուած են աստուածութիւնների հետ. ուշագրութեան արժանի է, որ բարեւոնական ստեղծագործութեան առասպելը 7 տախտակի վրայ է գրուած, իսկ Գիլգամէշի ազգային զրոյցը 12: Նոյն ազդեցութիւնն է ապացուցանում նաև Համմուրաբիի օրէնքը. այնտեղ էլ այն սկզբունքն է իշխում, թէ աչքի տեղ աչքը պէտք է հանել, ատամի տեղ ատամը, բարեւոնացին էլ որդեգրում է մէկին ասելով. «Դու իմ որդին ես», ինչպէս և Խորայէլացին, կամ մերժում է ամեն յարաբերութիւն ասելով. «Դու իմ հայրը չես» կամ «Դու իմ Տէրը չես»: Լաբանի և Յակովբի վեճն էլ հիմնուած է բարեւոնական օրէնքի վրայ:

Եթէ վայրենի գազաններն են սպանում կենդանիներին, փնասը տիրոջն է, և ոչ թէ պահապանինը. եթէ մէկը կասկածում է միւսի վրայ, նրան գող համարելով, իրաւունք ունի վկաների առաջ նրա տունը խուզարկել տալու: Բարեւոնում էլ կինը կարող է չբերքութեան դէպքում իւր ամուսնուն մի հարձ տալ և այդպիսով երեսայ ձեռք բերել: Բարեւոնական օրէնքի ամենապարզ օրինակն է Խորայէլի մէջ Արրահամի հարձի, Հագարի պատմութիւնը, որ այդ ձևով մայր է դառնում և բարձրամասում է իւր տիկնոջ նկատմամբ:

Բայց թողնենք այդ մանր մունր նմանութիւնները և տեսնենք թէ ի՞նչ յարաբերութիւն ունին միմեանց հետ բարեւոնական առասպելները աշխարհի ստեղծագործութեան, առաջին մարդոց, ջրհեղեղի մասին և Ս. Գրքի առաջին գլուխներում պատմուածները: Սկսենք ստեղծագործութեան պատմութիւնից:

Ս. Գրքի Ա. գլխում նկարագրուած է ամենից առաջ այն քառասյին դրութիւնը, որի մէջ գտնւում է տիեզերքը նախ քան Արարիչ Աստուածը կարգ ու կանոն է սահմանում նրա մէջ: Բնորոշ է այդ սկզբնական դրութեան համար, որ քառօսը պատկերանում է իբրև խաւար և ջուր: Այդ նախնական ովկիանոսը երրայեցին Թեհօմ է անուանում, որ մեզ շուտով կպատահի բարեւոնական առասպելի մէջ իբրև Թիհամատ: Այդ մութ քառօսի մէջ Արարիչ Աստուածը առաջին օրն իսկ լոյսն է յառաջ բերում: Դրանից յետոյ միացած նախաջրերը բաժանւում են երկու մասի, և դատւում են միմեանցից հաստատութեամբ: Այդ բանը ըմբռնելու համար պէտք է ի նկատի ունենալ, որ հին աշխարհի մարդիկ այն հասկացողութիւնն ունէին, որ ինչպէս երկրի վրայ, այնպէս էլ երկնական մարից վերև ովկիանոս կայ: Այդ երկու ովկիանոսները՝ հաստատութեան վերևը և ներքևը, բաժանում է Արարիչ Աստուածը և այդպիսով ստեղծում տեսանելի երկինքը: Երրորդ օրը ստեղծւում երկիրը, որ ջրերի միջից է դուրս գալիս և քնմիջապէս Աստուծոյ հրամանով ծածկւում է բուսական

նութեամբ: Չորրորդ օրը ստեղծուած են երկնային մարմինները և առանձնապէս շեշտուած է արեւի և լուսնի իշխանութեան մասին, որ անշուշտ այնպիսի կրօնի մէջ առաջ գալ կարող էր, ուր այդ լուսաւորները նաեւ իբրեւ Աստուած էին պաշտուած: Հինգերորդ օրը ստեղծուած են ձկներն ու թռչունները, և վերջապէս վեցերորդ օրը ցամաքային կենդանիներն ու ստեղծագործութեան գլուխ գործոցը՝ մարդը: Վեց օր աշխատուած է Աստուած մարդկանց նման և եօթներորդ օրը՝ շաբաթ օրը, հանգստանում:

Բայց միայն Ս. Գրքի Ա. գլխում չէ, որ այս խնդրի մասին խօսք է լինում: Ս. Գրքի այլ տեղերում եղած դանազան ակնարկներից դեռ ևս հնարաւոր է մի աւելի հին վարիանտ փորձիչատէ պարզ կերպով վերականգնել: Այդ ակնարկները մեծ մասամբ բանաստեղծական գրքերի մէջ են գտնուում և խօսում են Եհովայի կողմից մի ինչ որ առասպելական էակի հետ, որ ներկայանում է նախնական ուղիւնոսի անձնաւորումը: Այդ էակի անունն էլ փոխւում է. մի տեղ նա Բահաբ է կոչւում, մի այլ տեղ Լեւիթան, կամ վիշապ, օձ, երբեմն էլ պարզ կերպով ծով, անշուշտ անձնաւորեալ կերպով մտածուած: Առանձին գծերն այդ նկարագրութիւնների մէջ ի հարկէ տարբերուած են, բայց մի գլխաւոր միտք բոլորի մէջ էլ ընդհանուր է. այդ այն միտքն է, թէ սկզբում Եհովայի կողմէ ունեցել մի թշնամի էակի հետ, որ նախաձրերի անձնաւորումն է, և այդ կողմի հետեւանքն է, որ Եհովայն ստեղծել է երկինքն ու երկիրը: Այդպէս ՁԼ. Սաղմոսի մէջ կարդում ենք (10—12). «Դ՛հա տիրես զօրութեանց ծովու, և զխռովութիւն ալեաց նորա դ՛հա ցածուցանես, դ՛հա խոնարհեցուցանես որպէս վիրաւորս զԲահաբ, ի զօրութիւն բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո: Ք՛հ են երկինք և քո է երկիր, զաշխարհս լրիւ իւրով դ՛հա հաստատեցեր: Զհիւսիս և զհարաւ դ՛հա արարեր»:

Այլի է ընկնում առանձնապէս, որ նախ յաղթուած է Բահաբը և ապա ստեղծուած են երկինքն ու երկիրը:

ապա Բահաբը օգնականներ ունի, որոնց նոյնպէս իւր բազկի ոյժով փախցնում է Եհովայն:

Եսայի մարգարէ ԾԱ. 9—10. «Ջարթիր, զարթիր, զգեցիր զզօրութիւն բազուկ Տեառն. զարթիր իբրեւ յաւուրցն իսկզբանէ, իբրեւ յազգացն յաւիտենից: Ո՞չ դու այն ես, որ ջախեցեր զԲահաբ, վիրաւորեցեր զվիշապն: Ո՞չ դու այն ես, որ ցամաքեցուցեր զբազմութիւն ջուրցն անդնդոց, որ արարեր զխորս ծովուն ճանապարհ անցից վրկելոցն և ապրելոցն»:

Անշուշտ այս կտորի մէջ դեր է կատարում նաեւ Իսրայէլի ազատուելը Կարմիր ծովից, բայց Բահաբի և վիշապի յաղթուելու յիշատակութիւնը անկասկած Եհովայի կողմից հետ է կապուած ստեղծագործութիւնից առաջ: Նոյն նկարագրութիւնն են անում և Յովբի խօսքերը (ԻԶ. 12—13). «Զօրութեամբ հանդարտեցոյց զծով, իմաստութեամբ իւրով եհար զԲահաբ. հոգւով իւրով զարդարեաց զերկինս և ձեռք նորա անարգեցին զվիշապն փախստեայ»:

Այն դերը, ինչ որ այս կտորների մէջ կատարում է Բահաբը, այլ տեղերում վերագրուած է Լեւիթանին. այդպէս Սաղմոս ՀԳ. 13—17. «Դ՛հա պատառեցեր զօրութեամբ քով զծով. դ՛հա խորտակեցեր զգլուխս վիշապաց ի վերայ ջուրց: Դ՛հա փշրեցեր զգլուխս Լեւիթանայ և ետուր զնա կերակուր ժողովրդոց բնակելոց յանապատի: Դ՛հա բղխեցուցեր զաղբիւրս և զվտակս, դ՛հա ցամաքեցուցեր զգետս սաստիկս: Ք՛հ է տիւ և քո է գիշեր. զլոյս և զարեւ դու հաստատեցեր. և դու հաստատեցեր զամենայն սահմանս երկրի. զգարուն և զամառն դ՛հա ստեղծեր»:

Ուրեմն վիշապի պարտութիւնը դարձեալ կապուած է աշխարհի ստեղծագործութեան հետ: Այս կտորները պարզ կերպով ցոյց են տալիս, որ Իսրայէլի մէջ գոյութիւն է ունեցել մի առասպել Եհովայի և Թշնամի մասին, որ յետոյ մոռացութեան է տրուել, մանաւանդ որ նոյն պատմութիւնը Ծննդոց Ա. գլխում արդէն կար՝ յարմարեցրած Իսրայէլի ժողովրդի հասկացողութիւններին և նրա միաստուածեան ըմբռնմանը: Այդ մաքուր և զտուած հասկա-

ցողութեանն յարմարուելով է անշուշտ Ծննդոց Ա. գլուխը գրի առնողը յետ մղել Եահուէի ու Թհոմի կռիւը, որի գոյութիւնը դեռ ևս երևում է Թհոմ անուան յիշատակութեան և այն գծի մէջ, թէ Թհոմը երկու մասի է բաժանուած:

Տեսնենք այժմ, թէ ի՞նչ յարաբերութիւն ունի Իսրայէլի այս առասպելը բաբելոնական առասպելի հետ: Բաբելոնական զրոյցը աշխարհի ստեղծագործութեան մասին ծանօթ էր մեզ Բերոսսոսից (300 թ. Բ. Ա.), որ հետեւեալն էր պատմում այդ մասին. «Սկզբում տիեզերքը խաւար էր և ջրերով լցուած. այդ քաօսի մէջ սկիզբն են առնում զանազան հրէշային էակներ, որոնց բոլորի վրայ իշխում է մի կին Թամթէ անունով: Ապա հանդէս է գալիս Բէլը, երկու կէս է անում այդ կնոջը և նրա երկու մասերից երկինքն ու երկիրն է կազմակերպում ու կանոնաւոր վիճակի մէջ դնում: Սակայն երբ Բէլը տեսաւ, որ երկիրը դատարկ է և անպտուղ, հրամայեց կտրել աստուածներից մէկի գլուխը, արիւնը խառնեց հողի հետ և այդ խառնուրդից ստեղծեց մարդկանց ու կենդանիներին: Ապա նա ստեղծեց նաև արև, լուսին, աստղեր և հինգ մոլորակները»:

Բերոսսոսի այդ կարճ պատմութիւնը բոլորովին հաստատուեց սեպագիր արձանագրութիւններով, որ գտնուեցին Ասսուրբանիպալի (668—626) մատենադարանում: Սեպագիր արձանագրութիւնների մէջ աշխարհի ստեղծագործութեան առասպելը պատմուած է հետեւեալ կերպով.

«Մի ժամանակ, երբ վերևում երկինք չէր կոչում և ներքևում երկիրը անուն չունէր, երբ դեռ ամենասկզբնական սփկիւնոսը՝ Ապսուն և ամեն բանի մայր Նախանգուհի Թիհամատը իրար էին խառնում ջրերը . . . յառաջ եկան առաջին աստուածները: Ուրեմն ամեն բանի սկիզբը Նախաջուրն է, որ անձնաւորեալ կերպով իբրև արական և իգական էութիւն է պատկերացւում: Առասպելի մէջ այնուհետև մանրամասն նկարագրւում է աստուածների ստեղծագործութիւնը, Թէոգոնիան, յատկա-

պէս յետագայի արարիչ Մարդուկի: Սակայն շուտով այդ նոր ստեղծած աստուածների մէջ մի երկպառակութիւն է ընկնում, որովհետև Թիհամատը՝ աստուածների մայրը, գոգոհ իրերի նոր դրութիւնից, ապստամբում է վերին աստուածների դէմ և նրանց մի մասին կարողանում է իւր կողմն անցկացնել: Ապա նա ստեղծում է հրէշաւոր էակներ, որպէս զի իրեն օգնեն կռուի մէջ: Թիհամատի այդ ապստամբութիւնը ընականաբար դառնում է վերին աստուածների համար հոգսի և վրիժառութեան առարկայ: Բայց աստուածներից ոչ մէկը չի համարձակւում կռուի դուրս գալ Թիհամատի դէմ, մինչև որ Մարդուկը պատրաստակամութիւն է յայտնում ասպարէզ իջնելու, միայն այն պայմանով, որ Թիհամատին յաղթելուց յետոյ նրան յանձնուի տիեզերքի իշխանութիւնը և ճակատագրի որոշումը: Աստուածների համար մի փառաւոր հաց-կերոյթ է պատրաստւում և այստեղ գինով արբենալուց յետոյ վերջապէս խոստանում են կատարել Մարդուկի պահանջը. «Ով Մարդուկ, որովհետև դու ուզում ես մեր փոխարէն վրէժխնդիր լինել, քեզ ենք տալիս տիեզերքի արքայական իշխանութիւնը»: Ապա Մարդուկը պատրաստւում է կռուի, զինւում է նետ ու աղեղով, եռաժանիով, վերցնում է նաև աստուածային զէնքը՝ մի կայծակ, հողմերի պարկը (?) և հրեղէն ձիերը լծած, պատերազմական կառքի մէջ նստած, գնում է Թիհամատի դէմ: Վերջինիս պատահելով Մարդուկը մի անգամ ևս յիշեցնում է նրան իւր բոլոր չարութիւնը և ապա առաջարկում է կռուի դուրս գալ—«Պատրաստուիր, ես և դու պիտի կռուենք միմեանց հետ»: Մենամարտի մէջ յաղթում է Մարդուկը, որը իւր սուրը խրում է Թիհամատի մարմնի մէջ և նրա դիակը մի կողմ է նետում. ապա յարձակւում է նաև Թիհամատի օգնականների վրայ, յաղթում է նոցա և բանտարկում. ի վերջոյ գալիս է կրկին Թիհամատի դիակի մօտ, երկու մասի է բաժանում այն— «Մի կէսը վերցրեց նա և դարձրեց երկնականար, առաջը պատնէշ դրեց, պահապաններ կարգեց, հրամայելով նը-

բանց, նրա ջուրը բաց չթողնել: Թիհամատի վերին ջրերն ուրեմն պատնէշով բաժանած և վերև քշուած՝ կազմում են երկինքը: Առասպելի մէջ այնուհետև պատմուած է երկնային մարմինները՝ արեւի, լուսնի, մոլորակների ստեղծագործութիւնը և յիշած, թէ ինչ բանի պիտի ծառայեն նոքա, յատկապէս արեւն ու լուսինը: Դժբաղդաբար մի մեծ հատուած կորած է այստեղ առասպելի մէջ, ուր անշուշտ պատմուած է եղել երկրի, բուսականութեան, մարդկանց ստեղծման մասին. յատկապէս մարդկանց մասին վերջերս մի հատուած գտնուեց, որի բովանդակութիւնից երևում է, որ յիրաւի բաբելացիք մարդու ստեղծագործութիւնը նոյն ձևով են պատմել, ինչպէս աւանդում է Բերոսոսը (300 թ. ն. ք. Բ.): Այստեղ մենք տեսնում ենք, որ Արարիչ Աստուածը հրաման է տալիս կտրել աստուածներից մէկի գլուխը, որպէս զի նրա արիւնը խառնէ հողի հետ և մարդիկ ստեղծէ: Ամբողջ առասպելը վերջանում է մի օրհներգութեամբ ուղղուած Մարդուկին, որ փառաբանում է նրա ստեղծագործութիւնները առանձին առանձին և իրեն՝ իբրև աստուածների պետի:

Բաբելոնի և Խորայէլի առասպելների նմանութիւնը ակներև է բոլորովին. երկու աւանդութեան համաձայն էլ սկզբում ամեն ինչ ջուր է եղել. ծովային անդունդը մի անձնաւորեալ սոսկալի էակ է, որ բաբելոնեանց թիհամատ է կոչուում, իսկ եբրայեցեանց թիհամ: Երկու առասպելների մէջ էլ այդ էակը վիշապաձև է նկարագրած: Երկուսի մէջ էլ խօսուում է օգնականների մասին: Ապրտա մարութիւն վերին Աստուծոյ դէմ այստեղ էլ, այնտեղ էլ, այնտեղ Մարդուկն է կռուի դուրս գալիս, այստեղ Նահուէն: Թիհամատն էլ յաղթում է, թիհամն էլ վերին ու ներքին ջրերը այդ էակի բաժանմամբ նոյնն են երկու առասպելների մէջ էլ. այստեղ էլ, այնտեղ էլ յաղթութեան անմիջապէս հետևում է աշխարհի ստեղծագործութիւնը: Յիշելի է նաև այն, որ Մարդուկն իբրև լուսոյ և արեւի Աստուած է հանդէս գալիս և այդպիսով

յաղթում խաւարի զօրութեանը, իսկ Ս. Գլքի մէջ ամենից առաջ ստեղծում է լոյսը:

Մի անգամ այս նմանութիւնը նկատելուց յետոյ, որ չի կարող ի հարկէ պատահական լինել, հարց է առաջ գալիս, թէ ի՞նչ յարաբերութիւն ունին նոքա միմեանց հետ: Այդ հարցը կարող է երեք տեսակ պատասխան ունենալ. ա. Բաբելացիք իրենց առասպելը փոխ են առել իսրայէլացիներից. բ. Երկուսն էլ հիմնուած են նախնական սեմական ընդհանուր առասպելի վրայ և գ. Իսրայէլացիք փոխ են առել բաբելացիներից: Առաջին պատասխանը լուրջ կերպով մէջտեղ գալ ամենեւին չի կարող, որովհետև բաբելոնական առասպելը շատ աւելի հին է, այդ մենք յետոյ էլ կտեսնենք, քան թէ իսրայէլականը. Բ. այլևայլութիւնը կարող էր աւելի հաւանական լինել և ըստ ինքեան կարելի բան է, բայց առասպելի մէջ այնպիսի գծեր կան, որոնք անհասկանալի կմնային, թէ ի՞նչ ձևով են առաջ եկել, եթէ ընդունէինք, որ Խորայէլի ժողովրդի մէջ առասպելը սկզբնական է, այն ինչ բոլորովին հասկանալի են դառնում, եթէ ասենք, թէ առասպելը ծագել է Բաբելոնում և իսրայէլացիք այնտեղից փոխ են առել: Օրինակ Խորայէլի համար բոլորովին անհասկանալի պիտի լինի, թէ ինչու առանձնապէս ծովը և ջուրը պիտի լինի ամեն բանի սկիզբը, այն ինչ այդ բոլորովին բնական ու հասկանալի է Բաբելոնի համար: Որովհետև բաբելացին իւր երկրի կլիման տեսնելով, պիտի ասէր, Տիեզերքը այն ձևով է առաջ եկել, ինչպէս նա այժմ էլ ամեն տարի և ամեն օր առաջ է գալիս: Ինչպէս իւրաքանչիւր գարուն գարնան արեւի աստուած Մարդուկը ձմեռուայ անձրևներից հեղեղուած ու ծովին (կամ թիհամատին) նման դարձած երկիրը նորից ցամաքեցնում է և երևցնում, այնպէս էլ եղած պիտի լինի ամենատառաջին գարնանը, և տիեզերքը ստեղծուած պիտի լինի Մարդուկի և թիհամատի կռուից յետոյ: Կամ—որովհետև Մարդուկը միևնոյն ժամանակ առաւօտեան արեւի աստուածն է—ինչպէս որ արեւը ամեն առաւօտ կտրում անցնում է տիե-

զերական ծովը և գիշերային քառսից յետոյ նախ երեւ-
ցնում է երկինքը, ապա երկիրը, այնպէս էլ ստեղծագոր-
ծութեան առաջին առաւօտը ամենից առաջ ստեղծուել
են երկինքն ու երկիրը: Եթէ փորձենք նոյն պատկերը
Պաղեստինի կլիմայով բացատրել, մեծ դժուարութեան
կհանդիպենք. բացի այդ պէտք է այս պատկերի համար
մի գարնան կամ գարնան արևի Աստուած, ինչպէս Մար-
դուկն է, բայց ոչ թէ Նահուէն:

Սակայն այս առասպելը միակը չէ, որ իսրայէլացիք
վերցրել են բաբելացիներից: Նոյնպիսի նմանութիւն
գտնում ենք նաև Դրախտի զրոյցի մէջ, որ պատ-
մուած է Ծննդոց Բ. և Գ. գլուխներում: Այստեղ կարելի
է ասել բոլորովին ուրիշ տեսարան է բացւում մեր առաջ.
այլ ևս ծովը չէ ամեն բանի սկիզբը և պէտք չէ զսպել
այն, որ տիեզերքն առաջ գայ. այստեղ ամեն բանի ըս-
կիզբը անապատ երկիրն է, ուր ջուր է պէտք, որպէս զի
բուսականութիւն առաջ գալ կարողանայ: Այստեղ չկայ
նաև Ա. Գլխի վեհ հասկացողութիւնը Արարիչ Աստուծոյ
մասին, որ իւր լոկ խօսքով ստեղծում է ամեն ինչ: Այս-
տեղ Նահուէն իսկապէս յոգնեցուցիչ աշխատանք է կա-
տարում. նա կաւից մարդ է շինում, ինչպէս բրուտը իւր
ամանները. ապա նա կենաց շունչ է փչում նորաշէն մար-
դու քթածակերից, մի պարտէզ է տնկում և նրա մէջ
տեղաւորում մարդուն. պարտէզի մէջ են նաև կենաց
ծառը և Գիտութեան ծառը: Այդ պարտէզի մէջ է հո-
սում դրախտի գետը, որ իսկոյն չորս ճիւղի է բաժան-
ւում: Աւելորդ եմ համարում այլ ևս խօսել պատուիրա-
նազանցութեան մասին իւր հրաշալի նկարագրութիւննե-
րով ու խօսակցութիւններով կնոջ և օձի մէջ, որի հոգե-
բանական նուրբ ըմբռնողութիւնը միշտ էլ հիացմունքի
առարկայ է եղել: Այդտեղ խորին կրօնական զգացմուն-
քով նկարագրել են կամենում, թէ ինչպէս է յառաջացել
թշուառութիւնը մարդկանց մէջ, որտեղից են կեանքի
դառնութիւններն ու մահը իրենց սկիզբն առել:

Բաբելոնական զրոյցը, գրի առնուած ԺԵ. դարում

Ք. ա., հետեւեալն է պատմում մեզ այս խնդրի մասին:

Ադապան, որ ամենայն հաւանականութեամբ բաբե-
լոնական առասպելաբանութեան առաջին մարդն է, հան-
դէս է գալիս այստեղ իբրև ծովերի Աստուած Էա-
որդի: Սա է ստեղծել նրան, բարձրագոյն իմաստութիւն
պարգեւել, բայց առանց յաւիտենական կեանք շնորհելու:
Ադապայի բնակատեղին է Էա-ի սրբավայրը Էրիգուում՝
Եփրատի և Տիգրիսի բերանին մօտիկ: Այստեղ նա Էա-ի
տաճարի քահանայ է, զբաղւում է ձկնորսութեամբ
ծովի վրայ, որպէս զի կարողանայ սրբավայրին ձուկ մա-
տակարարել: Երբ նա այդպէս օրին մէկը դարձեալ ծովի
վրայ էր, յանկարծ բոլորովին հանդարտ ծովի վրայ փը-
չում է հարաւային քամին, խորտակում նաւը և նա ընկ-
նում է ծովը: Իբրև վրէժ այդ բանի համար, Ադապան
կոտորում է հարաւային քամու թևերը և վերջինը 7 օր
շարունակ դադարում է երկրի վրայ փչելուց: Այս դէպքի
մասին լսում է երկնքի Աստուած Անուն, մի պատգամա-
ւոր է ուղարկում երկիր, որպէս զի Ադապային իւր գահի
առաջ պատասխանատուութեան հրաւիրէ: Էա-ն այժմ
նախօրք սովորեցնում է Ադապային թէ ինչ է սպասում
նրան երկնքում՝ Անուի առաջ. «Երբ դու Անուին կներ-
կայանաս, քեզ կառաջարկեն մահուան կերակուր, չուտես.
մահուան ջուր կառաջարկեն, չխմես»: Անուի ներկայա-
ցուցիչը գալիս է Ադապայի մօտ և նրան իւր հետ երկինք
է տանում, անցկացնելով երկնքի դռնից, երբ Ադապան
ներկայանում է Անուին, ամեն բան կատարւում է ճիշտ
այնպէս, ինչպէս Էա-ն էր ասել. այն տարբերութեամբ
միայն, որ ոչ թէ մահաբեր կերակուր և ջուր են առա-
ջարկում նրան Անուի հրամանով, այլ ընդհակառակը
կեանքի կերակուր և ջուր: Բայց Էա-ի հրամանին հնա-
զանդ՝ Ադապան մերժում է առաջարկած հացը և ջուրը
և այդպիսով զրկւում է յաւիտենական կեանքից: «Կե-
նաց կերակուր բերէք նրան, որ ուտէ. կենաց կերակուր
բերին և նա չկերաւ. կենաց ջուր բերին նրա համար և
նա չխմեց. Անուն զարմացած նայեց նրան և ասաց. —

«Օ», Ադապա, ինչո՞ւ չկերար ու չխմեցիր, ուրեմն չես ապրի»։ ապա նա հրամայեց. «Վերցրէ՛ք նրան և յետ տարէ՛ք երկիր»։

Սխալ կլինէր անշուշտ այս բաբելոնական առասպելն համարել Ս. Գրքի դրախտի պատմութեան նախօրինակը. բայց մի շարք նման դժեր կան երկուսի մէջ, որոնք ստիպում են մեզ ընդունել, որ Ադապայի զրոյցը անշուշտ որոշ ազդեցութիւն դործել է դրախտի պատմութեան կազմութեան վրայ։ Այդպէս կենաց հացն ու կենաց ջուրը և նրանց հակադրութիւնը մահուան կերակրի ու ջրի հետ (հմատ. էա—ի խօսքերը մի կողմից, իսկ Եահուէի ու օձի խօսքերը ծառի պտղից սւտելու մասին միւս կողմից)։ Երկու զրոյցի մէջ հիմնական գլխաւոր գաղափարներն մէկն է՝ դիտութիւնը ձեռք բերելուց յետոյ մարդուն միայն անմահութիւնն է պակաս, որպէս զի նա բոլորովին աստուածանման դառնայ։ Ծննդոց Գ. 22. «Եւ ասէ Տէր Աստուած. Ահա Ադամ եղև իբրև զմի ի մէնջ՝ դիտել զբարի և զչար. և արդ՝ գուցէ ձգիցէ զձեռն և առնուցու ի ծառոյն կենաց, ուտիցէ և կեցցէ յաւիտեան»։ Այդպէս էլ երկնքի Աստուած Անուն է մտածում. էա—ն Ադապային շնորհել է բարձրագոյն իմաստութիւնը, ինչով կարելի է միայն այդ պարգևը լրացնել. պատասխանն է կենաց հաց։ Որովհետև Ադապան մերժում է, կորցնում է նա անմահութիւնը թէ իրեն և թէ ի հարկէ նաև իւր յաջորդների համար։ Հետաքրքրական է առանձնապէս, որ Ս. Գրքի խորամանկ և մոլորեցուցիչ օձը հանդէս է գալիս նաև մի բաբելոնական հին նկարի մէջ (այժմ բրիտանական մուզէյում), որի մէջտեղը բաբելացոց սուրբ ծառն է, աջ ու ձախ մի մարդ ու կին, որ ծառից պտուղներ են քաղում, իսկ կնոջ յետևը սողում է մի օձ։ Սեպագիր արձանագրութիւնների մէջ դեռ ևս չի գտնուած մի զրոյց, որ բացատրէր մեզ այդ պատկերը. բայց ամենին դարմանալի չի լինի, եթէ մի օր Բաբելոնի աւերակներից մի բնագիր ելնէ ու պատմէ այդ օձի մասին, թէ ինչպէս նա մոլորեցրել է առաջին կնոջը սուրբ ծառի տակ։

Բոլորովին նման են միմեանց նաև Ս. Գրքի (Ծննդոց Գ. և Ե.) նահապետների և բաբելոնական նախնական թագաւորների մասին պատմածները։ Այստեղ էլ, այնտեղ էլ նրանք թուով տաան են, շատ երկար ապրում են և վերջանում են ջրհեղեղի հերոսով։ Նրանք են զանազան արհեստների ստեղծողը մարդկանց համար։ Զարմանալի կերպով անուններն անգամ և նրանց մասին պատմածները նոյնն են երկու զրոյցների մէջ էլ։ Այդպէս՝ Ս. Գրքում երրորդ նահապետը կոչւում է Ենոչ, որ նշանակում է «մարդ»։ Բաբելոնական Գ. թագաւորի անունն է Ամելոն, որ նոյնպէս «մարդ» է նշանակում։ Զորրորդ նախահայրը Ս. Գրքում կոչւում է Գենան, որ «գարբին» է նշանակում. Գ. բաբելոնական թագաւորը Ամենոնն է, որ նշանակում է «գործաւոր, վարպետ»։ Աւելի աչքի է ընկնում այն տեղեկութիւնը, որ կայ Ս. Գրքում Ենոփքի մասին. «Եւ գնաց Ենոփք ընդ Աստուծոյ, յետ ծնանելոյ նորա զՄաթուսաղա, ամս երեքհարիւր. և ծնաւ ուստերս և դստերս։ Եւ եղեն ամենայն աւուրք Ենոփքայ ամբ երեք հարիւր և վաթսուն և հինգ։ Եւ քանզի գնայր Ենոփք ըստ հաճոյից Աստուծոյ, ոչ ուրեք գտանէր, զի փոխեաց զնա Աստուած (Ծննդ. Ե. 22—24)»։ Այս Ենոփքի անձնաւորութիւնը յետագայի հրէական զրոյցների կենդրոնն է կազմում. նա համարւում է բարձրագոյն իմաստութեան տէր, գիտակ երկնքի և երկրի գաղտնիքների. նաև աստղագիտութեան, աստղաբաշխութեան, գրի ու հաշուի գտնող։

Մինչև վերջին ժամանակները անհասկանալի էր բոլորովին Ենոփքի այդ պատկերը՝ իւր 365 տարուայ կեանքով։ Այժմ՝ սեպագիր արձանագրութիւնների շնորհիւ բոլորովին պարզուած է և այդ Ենոփքը Ս. Գրքի է. նախահայրն է։ Բաբելացիք էլ իրենց է. թագաւորի մասին զանազան բաներ են պատմում։ Էնմեղուրանիկին—այդպէս է նրա անունը—եղել է Արիի Աստուած Շամաչի քաղաքի՝ Սիպպարի թագաւորը։ Շամաւը վերցրել է նրան իւր մօս և սովորեցրել երկնքի ու երկրի գաղտնիքները. գըլ-

1006
2684

խաւորապէս այն արուեստը, որով հնարաւոր է երկնքի ու երկրի վրայ կատարուած նշանների միջոցով գուշակել ապագան: Այդ պատճառով էլ բաբելացոց մէջ այս էնմե- գուրանկին համարուում է կախարդ ու հմայող քահանա- ների նախահայրը: Մենք տեսանք, որ այդ նոյն յատկու- թիւնները վերագրուում են նաեւ ենովքին: Ս. Գրքի մէջ ենովքին տուած է 365 տարուայ կեանք. այդ բանը տա- րօրինակ էր, որովհետեւ միւս նախահայրերի տարեթուերը շատ աւելի են: Այժմ այդ 365 տարին ևս իւր բնական և հասկանալի բացատրութիւնն է գտնուում. ինչպէս որ էնմեգուրանկին Արեւի Աստուած Շամաշի ծառայութեան մէջ է, այնպէս էլ ենովքը ստանում է արեւի արուայ օրերի թիւը՝ 365, իբրեւ իւր կեանքի տևողութեան չափ:

Նմանութիւն կայ երկու աւանդութիւնների մէջ նաեւ այն տեսակէտից, որ, ինչպէս ասացինք, թագաւորների և նախահայրերի տարիները շատ շատ են նշանակուած: Բա- բելոնականը աւելի հսկայական թուեր է ասում. հաշուե- լով ստեղծագործութիւնից մինչև ջրհեղեղ 432,000 տարի, իւրաքանչիւրին 10 թագաւորներից բաժին է տալիս 43,200 տարուայ կեանք: Նմանութիւններն ուրեմն այնքան ակ- ներեւ են, որ կասկած չի կարող նրանց միմեանց հետ ունեցած առնչութեան մասին. և այստեղ էլ պէտք է ասենք, որ նախնականը բաբելոնականն է և փոխ ա- ռածը իսրայէլականը, որովհետեւ յատկապէս ենովքի տիպը օրինակ Իսրայէլի կրօնի մէջ անհասկանալի է բոլորովին, այն ինչ բաբելոնական կրօնի մէջ՝ իբրեւ Շամաշի պաշ- տօնեայ, էնմեգուրանկին ուրիշ կերպ լինել չէր կարող:

Այս խնդրի հետ կապուած մի հարց է մնում՝ միայն լուսաբանել. որտեղից են յառաջ գալիս այդ հսկայական թուերը նախահայրերի կեանքի մասին: Խօսք լինել չի կա- րող ի հարկէ այն մասին, թէ հնում պարզ պայմանների մէջ մարդիկ երբ և իցէ այդքան երկար ապրած լինել կա- րող են: 900 տարուայ հասակ ընդունել մարդկանց հա- մար հակառակ է ամեն բնախօսական գիտութեան: Ուրեմն երկար տարիների բացատրութիւնը դարձեալ մի-

թողութիւյի մէջ պիտի որոնել: Յայտնի է, որ հին արեւել- քում շատ մեծ դեր են կատարում զանազան հաշիւներ աշխարհի յարատևութեան մասին: Խօսք է լինում տիե- ղերական տարուայ մասին, որ ճիշտ նոյն բաժանմունքներն ունի, ինչ որ սովորական տարին, ուրեմն չորս եղանակ- ների է բաժանուում. ունի իրեն գարունն ու ամառը, ա- ջունն ու ձմեռը: Այդ մեծ տիեղերական տարուայ մէջ առանձին տեղ է բռնում ի հարկէ ջրհեղեղը: Նա պատ- կանում է բնականաբար տիեղերքի ձմրանը, այսինքն այն ժամանակին, երբ օրերը ամենից աւելի կարճ են և խաւարն ու յորդահոս անձրևներն են տիրում Բաբելոնում. այն ինչ ստեղծագործութիւնը ի հարկէ տիեղերական տարուայ գարնանը պիտի համապատասխանէ, մանաւանդ որ բա- բելացիք իրենց գարնան Արեւի Աստուած Մարդուկին էին վերագրում ստեղծագործութիւնը: Եթէ այժմ հարցնե- լու լինինք, թէ ինչ դիւք ունին տիեղերական տարուայ մէջ 9 նախահայրերը կամ թագաւորները, պատասխանը պարզ կլինի. գարնան սկզբից՝ Մարտի 8 (21)-ից մինչև ամենակարճ օրը՝ Դեկտեմբերի 9-(21) ուղիղ 9 ամիս է: Ուրեմն 9 թագաւորները կամ անգլջրհեղեղեան նախա- հայրերը տիեղերական տարուայ առաջին ինն ամիսների ներկայացուցիչներն են, իսկ տասներորդը, որի ժամանակ սկսւում է ջրհեղեղը, տասներորդ տիեղերական ամսուայ ներկայացուցիչն է:

Որ Ս. Գրքի նախահայրերի տարեթուերը շատ ա-ւելի պակաս են, քան թէ բաբելոնական թագաւորնե-րինը, յառաջ է գալիս այն հանգամանքից, որ Ս. Գրքի տիեղերական տարին շատ աւելի փոքր է, քան թէ բա- բելոնականը:

Նախապատմական վերջին զրոյցի, ջրհեղեղի զրոյցի մէջ Ս. Գրքի և Բաբելոնի առնչութիւնը ամենից աւելի որոշ է և տկնելու: Այդ պատճառով էլ կարող ենք այս անգամ բաբելոնականից սկսել և ապա նրա յարաբերու- թիւնը պարզել Սուրբ Գրքի հետ:

Արձանագիր առաջապելը գտնուելուց առաջ բաբելո-

նական զրոյցը ծանօթ էր մեզ բարեխնայի քահանայ Բե-
րոստոսի տուած տեղեկութիւնից, որի բովանդակութիւնը
հետեւեալն է. «Կռնոսը երազում երեաց 10-րդ նախա-
ջրհեղեղեան թագաւոր Քսիստոտրոսին և յայտնեց նրան,
որ Դայեղիոս ամսի 15-ին մարդիկ պիտի ոչնչանան մի ջր-
հեղեղի միջոցով. այդ պատճառով հրամայեց նրան մի
նաւ շինել, նրա մէջ տեղաւորուել իւր ազգականների
հետ, վերցնել նաև կերակուր, թռչուններ և չորքոտանի
կենդանիներ: Քսիստոտրոսը լսում է նրան, մի նաւ է շի-
նում 15 ստադիում երկարութեամբ և 2 ստադիում լայ-
նութեամբ և տեղաւորում է նորա մէջ իր կնոջ, որդի-
ների և բարեկամների հետ: Ջրհեղեղից յետոյ, երբ
ջուրը սկսում է պակասել, նա բաց է թողնում թռչուն-
ներից մի քանիսին, որպէս զի իմանայ թէ արդեօք ցա-
մաքը երևում է, թէ ոչ. որովհետև սոքա ոչ կերակուր ևն
գտնում և ոչ հանգստանալու տեղ, վերադառնում են
կրկին նաւ: Մի քանի օրից յետոյ նա նորից արձակում
է թռչուններին, որոնք վերադառնում են ցեխոտ ոտնե-
րով: Երբ նա երրորդ անգամ արձակում է նրանց, այլ
ևս չեն վերադառնում: Քսիստոտրոսը մտածեց թէ ուրեմն
երկիրը երեացել է ջրերի տակից և վերցրեց նաւի տախ-
տակներից մի քանիսը. տեսնելով, որ նաւը իջել է մի լե-
րան վրայ, ցած իջաւ կնոջ, որդիների և նաւավարի հետ,
համբուրեց երկիրը, սեղան շինեց, զոհեց աստուածներին
և իւր հետ իջնողների հետ վերացաւ: Որովհետև նա և
իւրայինները այլ ևս չվերադարձան, նաւի մէջ մնացածները
ցած իջան և սկսեցին նրանց որոնել. բայց նա այլ ևս
չերեաց նրանց աչքին, միայն մի ձայն լսեցին օդի մէջ,
որ հրամայում էր աստուածավախ լինել, որովհետև Քսի-
ստոտրոսը իւր բարեպաշտութեան պատճառով արժանի է
համարուել աստուածների մօտ ապրելու. նոյնպէս և նրա
կինը, աղջկաները և նաւավարը: Նոցա հրամայւում է կըր-
կին Բաբելոն վերադառնալ և յայտնւում, թէ այն եր-
կիրը, ուր նոքա այժմ գտնւում են, Հայաստանի մի մասն
է: Այն ժամանակ նոքա էլ աստուածներին զոհ են մա-

տուցանում և ոտով ճանապարհ են ընկնում Բաբելոն:

Այն զարմանալի նմանութիւնը, որ կայ այս և Ս. Գրքի
Ջրհեղեղի մէջ, առիթ է տուել առաջ կարծելու, որ Բե-
րոստոսը աղբուած է Ս. Գրքից. բայց այդ մասին այժմ
խօսք լինել չի կարող, որովհետև գտնուած է սեպագիր
զրոյցը Ասուրբանիպալի կամ Սարգանապալի մատենագա-
րանի մէջ Նինուէում (668 — 626), որը այժմ պահուած է
բրիտանական մուզէյում: Սեպագիր արձանագրութեան
մէջ Ջրհեղեղի զրոյցի բովանդակութիւնը հետեւեալն է.
«Աստուածները, նրանց մէջ յատկապէս Բէլը, որոշում են
մարդկանց խիստ պատժի ենթարկել իրենց մեղքերի
պատճառով և ոչնչացնել նրանց մի Ջրհեղեղով: Սակայն
աստուածներից մէկը՝ Էա-ն ընտրում է մարդկանցից մէ-
կին, Ուտնապիշտիմին Շուրիպպակ քաղաքից, որը «չատ
իմաստուն» (Ատրախազիս կամ Խաղիսատրա, որ = Քը-
սիստոտրոսին) էր, որպէս զի ազատի նրան: Մի երա-
զի միջոցով տեղեկութիւն է տալիս նա սորան աս-
տուածների վճռի մասին և հրամայում է նորան ազա-
տուելու համար մի նաւ շինել և ամեն տեսակ կենդանի
էակներից իւր հետ վերցնել: «Դու, Շուրիպպակից մարդ,
մի նաւ շինիր, թող քո կայքը և մտածիր կեանքիդ մա-
սին, թող ստացուածքդ և ազատիր կեանքդ, ամեն տե-
սակ կեանքի սաղմ վերցրու նաւիդ մէջ. այն նաւը, որ
դու այժմ պիտի շինես, թող լաւ որոշուած լինեն նորա
չափերը: Ատրախազիսը (= Ուտնապիշտիմ) կատարում է
Էա-ի հրամանը, շինում է նաւը հրամայուած չափերի
համաձայն, ծեփում կարով, բազմութիւ խցերի է բաժա-
նում այն և նրա մէջ տեղաւորում է իւր բարեկամնե-
րին, այլ և ամեն տեսակ ընտանի և վայրենի կենդանի-
ներ: Ջրհեղեղն սկսելուց ոչ շատ առաջ, որ նրան առանձին
նշանով իմաց են տալիս, մտնում է նաւը, իսկ ղեկա-
վարը սկսում է նաւի ղեկավարութեան գործը: Ջրհե-
ղեղը սկսւում է, որը նկարագրւում է իբրև բացարձակ
ազատութիւն բոլոր տարերային զօրութիւնների և ջրերի,
միացած թանձր խաւարի հետ: Ամբողջ երկիրը փոխւում

է ծովի, որի երեսին լողում են մարդկանց դիակները. 6 օր տևում է ջրհեղեղը, 7-րդ օրը հանգստութիւն է տրուում և դադարում: Ջրհեղեղից սարսափում են մինչև անգամ աստուածները, որոնք բարձրանում են ամենաբարձր երկինքը՝ Անուի մօտ և այնտեղ պազում շների նման: Ատրախաղիսը բաց է անում օդանցքը և տեսնում է ընդհանուր աւերածը. «նա չողում է, նստած լաց է լինում և նրա այտերի վրայ հոսում են արտասուքները»։ Ապա սկսում է երևալ երկիրը. նաւը կանգ է առնում Նիդի(?) սարի վրայ, ուր մնում է 6 օր. 7-րդ օրը պատմում է Ատրախաղիսը, «Մի աղանի արձակեցի և բաց թողի նրան. աղանին թռաւ այս ու այն կողմ, բայց որովհետև հանգչելու տեղ չկար, նորից եկաւ: Այն ժամանակ արձակեցի մի ծիծեռնակ և բաց թողի նրան. ծիծեռնակը թռաւ այս ու այն կողմը, բայց հանգչելու տեղ չգտաւ, վերադարձաւ. այն ժամանակ արձակեցի մի ագռաւ և բաց թողի. թռաւ ագռաւը, տեսաւ որ ջուրը պակասում է, գիշատեց և կռկռաց, բայց չվերադարձաւ: Ագռաւի չվերադառնալը Ատրախաղիսին նշան է ծառայում, թէ ջուրը պակասել է. իւրայիններով իջնում է նա նաւից, բաց թողնելով բոլոր կենդանիներին, նրա առաջին գործն է լինում զոհ մատուցանել, որի անուշահոտութիւնից հաւաքւում են աստուածները «և ինչպէս ճանճեր շրջապատում են զոհողին»։

Սակայն Բէլը սաստիկ բարկացած է, որ Ատրախաղիսը ազատուել է կորստից, իսկ էան յանդիմանում է նրան հետևեալ խօսքերով. «Դ՞նէ, իմաստունդ աստուածների մէջ, հզօրդ, որքան անմիտ ես, որ ջրհեղեղ ես հանում. պատժիր մեղաւորին իւր մեղքի համար, յանցաւորին իւր յանցանքի համար. փոխանակ ջրհեղեղ հանելու, ուղարկիր վայրի գազաններին, որ ոչնչացնեն նրանց, ուղարկիր սողն ու ժանտախտը, որ կոտորեն նրանց»։ Բէլը յանդիմանում է էան որ նա աստուածների խորհուրդը յայտնել է Ուտնապիշտիմին. բայց էան մերժում է այդ յանդիմանութիւնը, յայտնելով, որ ինքը չէ յայտ-

նել աստուածների խորհուրդը, այլ «չափազանց իմաստունին» (= Ատրախաղիս) երազ է ուղարկել և նա դրանից դուշակել է աստուածների գաղտնիքը: Վերջապէս Բէլը հանգստանում է և ի վերջոյ մանում է նաւը, բռնում է Ուտնապիշտիմի ձեռքից, նրա կողքին չափեցնում է կնիքը, շօշափում է երկուսին էլ, անցնում երկօրի մէջտեղը, օրհնում է նրանց հետևեալ խօսքերով. «Առաջ Ուտնապիշտիմը մարդ էր, այժմ Ուտնապիշտիմը և իւր կինը թող մեզ աստուածներիս նման լինին. Ուտնապիշտիմը թող ապրի հեռու, գետերի բերանի մօտ»։ «Այն ժամանակ վերցրին նրանք ինձ,—սյուպէս է վերջանում զրոյցը—և բնակեցրին հեռու, գետերի բերանների մօտ»։

Նմանութիւններն այստեղ Սուրբ Գրքի ջրհեղեղի զրոյցի հետ այնքան ակներև են, որ երկուսը ու մանրամասն համեմատութիւններ անելու կարիք անգամ չկայ. բաւական է յիշել թույլներն տեսարանը: Այստեղ էլ ուրեմն դիտաւոր հարցն այն է, թէ ինչպէս պէտք է հասկանալ այդ առնչութիւնը: Այժմ էլ ի հարկէ խօսք չի կարող լինել այն կարծիքի մասին, թէ Խորայէլից են վերցրել բաբելոնցիք իրենց առասպելը. այդ անկարելի է քաղաքակրթութեան և կրօնների պատմութեան տեսակէտից: Բաբելոնական առասպելը ջրհեղեղի մասին արդէն գրականութեան սեպհականութիւն է դարձած այն ժամանակ, երբ Խորայէլացիք գեռ ևս ազգութիւն չէին կազմում, այլ թափառական ցեղեր էին ասորական և արաբական անապատներում: Պէտք է ի նկատի ունենալ, որ բաբելոնական առասպելը յայտնի է մեզ ոչ միայն Սասուրբանիպալի մոտենադարանից, այլ նրանից հատուածներ կան, գրուած 21. դարում Քրիստոսից առաջ, Բ. կարելիութիւնն այն կը լինէր, որ երկուսի համար էլ մի ընդհանուր աղբիւր ընդունէինք. բայց այս դէպքում այդ աւանդութիւնը սեպհականութիւն պիտի լինէր բոլոր սեմական ցեղերին և առհասարակ հին աշխարհին, այն ինչ այդպէս չէ. սերտ առնչութիւնը նկատելի է միայն Ս. Գրքի և Բաբելոնի առասպելի մէջ: Եթէ սյուպէս է, առասպելի

բուն հայրենիքը անշուշտ դարձեալ Բաբելոնն է, մանաւանդ որ տեղական կոլորիտն էլ միայն Բաբելոնին է համապատասխան, բայց ոչ երբէք Իսրայէլի երկրին։ Որովհետեւ մի կողմ թողած, թէ արդեօք այդ առասպելին հիմք ծառայել է որ և է պատմական դէպք, որ և է մեծ հեղեղումն, որ ի հարկէ դարձեալ միայն Բաբելոնին է համապատասխան, պէտք է ասենք, որ ընդհանրապէս այդպիսի աշխարհայեացք առաջ գալ կարող է միայն այնպիսի երկրում, ուր ջրերը շատ առատ են լինում և երբեմն էլ մեծամեծ զնաններ են հասցնում աղգաբնակութեանը։ Իսկ այդպիսի երկիր է Եփրատի և Տիգրիսի ստորին հովիտը, բայց ոչ երբէք Պաղէստինը։

Ի՞նչ բանի վրայ է հիմնուած իսկապէս ջրհեղեղի զրոյցը։ Որ որ և իցէ պատմական տեղական դէպքի յիշողութիւն կապուած կարող է լինել նրա հետ, այդ ուրանալ չի կարելի։ Բայց զրոյցի իսկական վերջնական սկզբնաւորութիւնը անշուշտ դարձեալ զուտ միթոլոգիական է, և ջրհեղեղն էլ այդ պատճառով ոչ թէ երկրի վրայ պէտք է որոնել, այլ երկնքի։ Ջրհեղեղի հերոսը, որ իւր նաւով կամ տապանով կտրում անցնում է ջրերը, սկզբնապէս Արեւի Աստուածն է, որ նաւարկում է երկնային ովկիանոսի վրայով։ Ջրոյցների և առասպելների մէջ այդ երեւոյթը շատ նկատուած է, որ որ և իցէ Աստուծոյ հետ կապ ունեցող երեւոյթները փոխանցւում են մարդկանց վրայ։ Որ ջրհեղեղի հերոսը սկզբնապէս աստուածների հետ կապ ունեցող էակ է եղել, երևում է այժմեան զրոյցի մէջ ևս այն հանգամանքից, որ նա վերջի վերջոյ Աստուած է դառնում, աստուածների մօտ է վերանում։

Այս է ընդհանուր գծերով։ Բաբելոնական կրօնի և քաղաքակրթութեան ունեցած աղբեցութիւնը Իսրայէլի կրօնի, և նրա միջոցով նաև ամբողջ քրիստոնէական աշխարհայեացքի վրայ։ Եթէ մենք հարցնելու լինինք, թէ երբ է տեղի ունեցել այդ աղբեցութիւնը, պատասխան տալը դժուար չի լինի։ Ոմանք ասում են՝ այն շրջանում, երբ ասորեստանցիք վերջին անգամ շատ մօտիկ յարա-

բերութեան մէջ մտան Պաղէստինի հետ, կործանեցին Իսրայէլի թագաւորութիւնը և այլն, ուրեմն Ը. դարու կէսերից մինչև է. դարու կէսերը։ Ուրիշները Դաւթի և Սողոմոնի ժամանակն են համարում այս շրջանը, երբ Իսրայէլի մէջ մուտք գործեցին օտար հասկացողութիւններն ու առասպելները, ուրեմն մօտաւորապէս Ժ. դարը։ Բայց ամենից աւելի հաւանական են թագաւորութիւնն այն է, որ այս հասկացողութիւններն ու զրոյցները մուտք են գործել Քանան դեռ Իսրայէլի այնտեղ հաստատուելուց շատ առաջ. ուրեմն այն շրջանում, որ մենք վերև նկարագրեցինք իբրև Տել-Ամարնայի շրջան, 1450-ի և 1350-ի մէջ։ Եւ այդ դէպքում Իսրայէլն ի հարկէ միայն միջնորդաբար՝ քանանացիների միջոցով է ծանօթացել այդ նիւթերի հետ։

Այդ կարծիքն է հաստատում նաև այն հանգամանքը, որ Իսրայէլի մէջ այս զրոյցներն ու առասպելները բոլորովին կերպարանափոխուել են և յարմարեցրած են Իսրայէլի յօդովրդի աւելի մաքրուած ու զտուած հասկացողութիւններին։ Աստուծոյ և աշխարհի մասին։ Այդպիսի զարգացման համար երկար ժամանակ էր հարկաւոր։ Այնտեղ մենք տեսնում ենք ամենաթուրք բազմաստուածութիւն, այստեղ ընդհակառակը կատարեալ միաստուածութիւն։ Բաբելոնական կրօնը բոլորովին ընկած է կախարդութեան և հմայութեան աղբեցութեան տակ, որին բոլորովին հակառակ են Իսրայէլի մարգարէները. այնտեղ տիրում է աստուածների պատկերների պաշտամունքը, իսկ այստեղ ոչ մի պատկեր չկայ և մարգարէներին յաջողւում է դրսից մտած այդպիսի սովորութիւններն արմատախիլ անել։ Այնտեղ աստուածները կապւում են բնութեան հետ, իսկ այստեղ արդէն առաջ է եկել այն կրօնական համոզումը, թէ Աստուած բարձր է բնութիւնից և բնութիւնը ենթարկւում է նրան։

Սակայն Իսրայէլի ամենագեղեցիկ գանձը մարգարէների այն խօսքն է, որի համար նոքա ամենայն եռանդով կռիւ են մղում, թէ Աստուած զոհ ու ծիսակատարութիւն չի պահանջում, այլ սրտի բարեպաշտութիւն և գործերի

արդարութիւնս. «Թող իրաւունքը ջրի նման
յորդանայ և արդարութիւնը անհուն հե-
ղեղ դառնայ»: Կրօնը ամենասերտ կապերով կապ-
ւում է բարոյականութեան հետ Իսրայէլի կրօնի մէջ.
և այդ է, որ նրան անչափ բարձր է դարձնում բոլոր հին
արեւելքի կրօններից: Ել ուրիշ հրտեղ կարելի է այնպիսի
մեծ կրօնական անձնաւորութիւններ գտնել, ինչպէս մար-
գարէններն են—զայրացկոտ Ամովսը, փառապանծ Եսային,
խորին քնքոյշ զգացմունքներով լի Երեմիան, մի կողմ թո-
ղած դեռ Մովսէսն ու Եղիան: Բաբելոնական կրօնի և
քաղաքակրթութեան ազդեցութիւնը ամբողջ հին աշ-
խարհի, ուրեմն նաև Իսրայէլի ժողովրդի վրայ անուրա-
նալի է. բայց Բէլը կործանուեց, Նեբոն խորտակուեց,
իսկ Իսրայէլի երգիչների որսորդութիւնը ցնծութեան աղա-
ղակը հաղար տարիներից ի վեր դեռ այսօր էլ լսում է.
«Ո՞վ է աստուածներ ի մէջ քեզ նման, Եսահուն է»:

Եթէ պատմութեան դատաստանը նշանակութիւն ունի,
— և մենք ստիպուած ենք նրան ամենամեծ նշանակութիւնը
տալ, — Բաբելոնի բաղմամբ լսաստուածները կորան ժամանա-
կի հետ, իսկ փոքրիկ Իսրայէլի Աստուածը դրաւեց հեթա-
նոսների սրտերը և ամենաազդեցիկ զօրութիւնը դարձաւ
մարդկութեան պատմութեան մէջ հազարաւոր տարիներ
շարունակ: Ի՞նչ ուրիշ պատճառ ունենալ կարող է այդ
երևոյթը, բացի այն, որ այս կրօնը անպայման
բարձր է կանգնած և մարդկանց սրտերին
շատ աւելի մօտ է, քան բոլոր միւսները:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԳԻԼԳԱՄԷՇԻ ՎԵՊԸ

Բաբելոնական ամենաընդարձակ առասպելական վէպը
Գիլգամէշի վէպն է, որի բովանդակութիւնը հետեւեալն
է, 12 տախտակների վրայ գրուած. «Գիլգամէշը Ուրուկի
կամ Էրեկի, Իշտարի քաղաքի իշխանն է, որ շինել է
քաղաքի պարիսպները և իւր ուժով ու զօրութեամբ ամ-
բողջ ազգաբնակչութիւնը հպատակեցրել իրեն: Բոլորը այդ
պատճառով դժգոհ են նրանից և խնդրում են արարչուհի
Արուրուին Գիլգամէշի նման մի ուրիշ մարդ էլ ստեղծել,
որ նրան հակառակել կարողանայ և Գիլգամէշը ստիպուած
լինի ուշադրութիւնը նրա վրայ դարձնել: Աստուածուհին
լսում է նրանց խնդիրը, ստեղծում է կաւից Լաբանիին,
որը մի ահագին հսկայ էր, ամբողջ մարմինը ծածկուած
մազերով: Նա սկզբում ապրում էր վայրենի կենդանիների
հետ միասին և կերակրւում էր խոտով ու արմատներով:
Լաբանին շատ նեղութիւն է տալիս մի որսորդի, այնպէս
որ վերջինս ստիպուած հնարներ է մտածում նրանից
ազատուելու համար: Որսորդի հայրը և Գիլգամէշը, որին
նոյնպէս պատմում են Լաբանիի մասին, խորհուրդ են
տալիս նրան մի անառակ կին ուղարկել Լաբանիի մօտ և
նրա միջոցով գրաւել նրան դէպի Ուրուկ: Փորձը յաջող-
ւում է. անառակ կինը այնպէս կարողանում է շարժել
նրա զգայականութիւնը, որ կատարելապէս գերում է նո-
րան: Լաբանին սկսում է խորշել կենդանիներից և նրա
մէջ ցանկութիւն է յառաջ գալիս մարդկանց հետ հաղոր-
դակցութեան մէջ լինել: Անառակ կինը պատմում է նրան
նաև Գիլգամէշի մասին և վերջապէս կարողանում է հա-
մոզել թողնել կենդանիներին և քաղաք գնալ: Այստեղ
Լաբանիի գլխաւոր ցանկութիւնն է կռուի մէջ փորձուել
Գիլգամէշի հետ և այդպիսով հսկայի հետ բարեկամանալ:
Այդ միջոցին Գիլգամէշն էլ երազ է տեսնում, որ իբր թէ

մի հզօր է գալիս իւր վրայ, որից հազիւ ազատուում է նրա մայրը մեկնում է երազը և այժմ Գիլգամէշն էլ ցանկանում է Էաբանիի բարեկամը դառնալ: Ուրուկում երկու հսկաները բարեկամութեան դաշն են կապում:

Սակայն Էաբանին շուտով ձանձրանում է քաղաքացին կեանքից և կարօտով ձգտում է դէպի դաշտերը, ուր առաջ էր ապրում. նա անիծում է անառակ կնոջը, որ իրեն խորամանկութեամբ զրաւել էր դէպի Ուրուկ: Մինչև անգամ Շամաշը երկնքից համոզում է նրան ի զուր տեղը չվրդովուել և չնդովել անառակին, որովհետև նա միայն լաւ բան է արել. նրա շնորհիւ այժմ Էաբանին արքայական կերակուր է վայելում, փառաւոր զգեստներ հագնում և եղբայր է դարձել գեղեցիկ Գիլգամէշին: Բայց ոչինչ չի օգնում: Էաբանին սկսում է մահուան նախազգացութեամբ տանջուել, մի սարսափելի երազ է տեսնում և պատմում Գիլգամէշին. երազում նա տեսել էր ներգալին՝ Ստորերկրեայ աշխարհի Աստծուն, մռայլ դէմքով և մազիկներով և այժմ ստիպուած է նրան հետեւելու դէպի ստորերկրեայ աշխարհ: Ապա խօսք է լինում (կտորներ պակաս են զրոյցի մէջ, այդ պատճառով էլ կապակցութիւնն անհասկանալի է) մի արշաւանքի մասին Խումբաբայի դէմ, որ ապրում էր արևելքում և պահպանում էր Իրնինի-ի (=էլամական Իշտար) սուրբ անտառը և Բէլի կենաց ծառը: Գիլգամէշի մայրը, որ քահանայուհի էր, Շամաշից խնդրում է օգնութիւն վտանգաւոր ճանապարհորդութեան միջոցին: Խումբաբան, որի դէմ են գնում, Բէլի կողմից նշանակուած էր կեդրոնների պահապան: Նրա ձայնը սարսափելի էր և սարսուռ էր ազդում ամեն մօտեցողին: Դեռ ևս իրար չտեսած՝ վհատում է Էաբանին, բայց Գիլգամէշը նրան սիրտ է տալիս մահը մոռանալ և չփախենալ: Այսպէս հասնում են այն սարին, որի վրայ է կեդրոնների անտառը. այնտեղ ապրում են աստուածները և այն է Իրնինիի Սրբութիւն սրբոցը: Երկու բարեկամները տեսնում են հրաշալի բարձր, փարթամ կանաչած կեդրը՝ Կուխն սկսելուց առաջ Էաբանին սարսա-

փելի երազներ է տեսնում. Գիլգամէշը մեկնում է այն երազները իբրև նշան յաղթութեան, և յիրաւի Խումբաբան պարտում է և սպանում:

Յաղթական Գիլգամէշը թագը դնում է իւր գլխին և փառահեղ ու գեղեցիկ հերոսին տեսնում է այժմ Իրնինի Իշտարը. «Լաւ, Գիլգամէշ, դու եղիր իմ սիրականը, դու եղիր իմ ամուսինը. ես ուզում եմ քո կինը լինել»: Իւր բոլոր ձիւքն ու զրաւչութիւնը դործ է դնում Իշտարը Գիլգամէշին համոզելու համար, բայց ամեն փորձ ի զուր է անցնում: Գիլգամէշը կոպիտ խօսքերով մերժում է նրա առաջարկը և երեսօղն է տալիս, թէ ինչպէս նա իւր բոլոր սիրականներին վերջ ի վերջոյ դժբախտացրել է, «թամուզին» քո երիտասարդ սիրականին, դու ամեն տարի լաց որոշեցիր» — ասում է նա. նոյն դժբախդ վիճակն են ունեցել նրա սիրած Թուշուներ, առիւծը, ձին, մի հովիւ և վերջապէս պարտիզպան Իշուլլանուն. — «Ինձ էլ — վերջացնում է Գիլգամէշը իւր խօսքը — սիրում ես դու և նրանց նման պիտի դարձնես» (Հմմտ. Արա դեղեցիկ զրոյցի հետ): Երբ Իշտարը այս խօսքերը լսեց, լի զայրոյթով երկինք դնաց և իւր հօրը՝ Անուին խնդրեց, որ նա մի երկնային ցուլ ստեղծէ Գիլգամէշին ոչնչացնելու համար, որովհետև նա անիծել էր Իշտարին: Անուն սկզբում տատանւում է կատարել իւր դստեր ցանկութիւնը, որովհետև վախենում էր, թէ 7 սովի տարիներ կլինին. բայց Իշտարը հանգստացնում է նրան, թէ բաւական պաշար ունի հաւաքած մարդկանց համար: Դրանից յետոյ Անուն կատարում է նրա բուռն ցանկութիւնը, և Գիլգամէշն ու Էաբանին այժմ ստիպուած են կռիւ մղել երկնային ցուլի դէմ: Թէև ցուլը իւր մի շնչով ահագին կոտորած է առաջ բերում Գիլգամէշի մարդկանց մէջ, բայց ի վերջոյ Գիլգամէշին և Էաբանին յաջողում է սպանել ցուլին և հանգստանալ: Այդ բանն աւելի ևս կատաղեցնում է Իշտարին. նա բարձրանում է Ուրուկի պարիսպների վրայ և անիծում է Գիլգամէշին, որ սպանել էր երկնային ցուլին, և ապա իր նաժիշտների հետ միասին սկսում է ող-

քալ երկնային ցուլի համար: Գիլգամէշը առանց ուշադրութիւն դարձնելու այդ բանին, հանում է սպանած ցուլի եղջիւրները և նուիրաբերում իւր աստուած Լուգաբանդային: Ապա Գիլգամէշն և Էաբանին լուանում են իրենց ձեռները Եփրատի մէջ և ճանապարհ են ընկնում դէպի Ուրուկ: Այնտեղ խմբուած ազգաբնակութիւնը հիանում է նրանցով և ընդունում հետեւեալ յաղթական աղաղակով. «Ո՛վ է գեղեցիկ մարդկանց մէջ, ո՛վ է փառահեղ մարդկանց մէջ. — Գիլգամէշն է գեղեցիկ մարդկանց մէջ, Գիլգամէշն է փառահեղ մարդկանց մէջ»:

Չնայելով բոլոր ուրախութեան սակայն շուտով նկատուում է, որ Էաբանին ծանր կերպով հիւանդանում է. երևի երկնային ցուլի շունչը նրան էլ դիպել էր: Հիւանդութեան հետեւանքն այն է լինում, որ Էաբանին մեռնում է և Գիլգամէշը մենակ մնացած, սկսում է մի սիրտ կտրատող ողբ իւր սիրելի բարեկամի մահուան վրայ (համա. Դաւիթ և Յովնաթան): Սակայն Գիլգամէշը վախենում է, թէ իրեն էլ միևնոյն տխուր վախճանն է սպասում. նա չի կամենում մեռնել և այդ պատճառով մտաբերում է իւր նախահայր Ուտնապիշտիմին և պատրաստուում է նրա մօտ ճանապարհորդելու: Որպէս զի նրանից իմանայ կենդանի մնալու դադարները:

Բայց մինչև երջանիկների կղզին հասնելը բազմաթիւ վտանգներ կան ճանապարհորդի առաջ. ամենից առաջ նրա դէմ են ելնում առիւծները. նոցանից ազատուելով Գիլգամէշը դալիս է կարիճամարդկանց մօտ, որոնք պահպանում են Մաշու սարերի մութ անցքը դէպի մահուան ջրերը: Երբ կարիճամարդը տեսնում է Գիլգամէշին, ասում է. Աստուածների մարմնից է նրա մարմինը, իսկ կարիճակինը աւելացնում է. $\frac{2}{3}$ -ը նրա մէջ աստուածային է, իսկ $\frac{1}{3}$ -ը մարդկային: Նոքա խորհուրդ են տալիս Գիլգամէշին յետ կենալ վտանգաւոր մտադրութիւնից, բայց վերջապէս զիջում են նրա խնդրին և բաց են անում նորա առաջ սարերի դուռը:

Ամենախորին խաւարի մէջ երկար ճանապարհորդելուց

յետոյ, վերջապէս հասնում է նա ծովի ափը, ուր մի հրաշալի աստուածային պարտէզ կայ, որի ծառերի պտուղները թանգազին քարեր են. այստեղ է գտնուում Սիդուրի Սաբիտու աստուածուհին, որ ապրում է ծովային պալատում (համա. Ողիսականի Կալիպսոյի հետ):

Սկզբում ծովերի այդ թագուհին չի ուզում նրան ներս թողնել, բայց վերջը Գիլգամէշի սպառնալիքների վրայ ներս է թողնում. հարցնում է նրա ճանապարհորդութեան նպատակի մասին և խորհուրդ է տալիս ձեռք քաշել անիրագործելի ճանապարհորդութիւնից. որովհետև այն ծովը, որ դէպի երջանիկների կղզին է տանում, աննաւարկելի է. ո՛չ ոք չգիտէ նրա ճանապարհը, բացի Շամաշից՝ արևի Աստծուց: Վերջապէս խղճալով Գիլգամէշին, ցոյց է տալիս նրան ճանապարհ դէպի այն նաւավարի մօտ, որ կարող էր նրան մահուան ջրերի վրայով երջանիկների կղզին տանել:

Երկար, տանջանքներով լի ճանապարհորդութիւնից յետոյ, վերջապէս Գիլգամէշը հասնում է երջանիկների կղզին: Նաւի վրայից պատմում է Գիլգամէշը նախահօրը իւր զալու պատճառը: Ուտնապիշտիմին էլ չգիտէ, թէ ինչ պէտք է անել, մահուան ճակատագիրը աստուածներն են որոշել, ասում է նա, և ի դուր է այդ ճակատագրի դէմ կռիւ մղելը: Գիլգամէշը նրան ասում է. «Ձե՛ որ դու էլ մարդ էիր. ի՞նչպէս է, որ այժմ անմահ ես դարձել և աստուածների շարքը անցել»: Ուտնապիշտիմը մանրամասն պատմում է նրան ջրհեղեղի պատմութիւնը և իւր վերացումը երջանիկների կղզին: Ուտնապիշտիմի կինը խղճում է Գիլգամէշին և ուզում է զանազան կախարհութիւնների միջոցով անմահութիւն տալ նրան, բայց ոչինչ չի յաջողում: Վերջապէս Գիլգամէշին ձիւնի նման մաքուր են դարձնում և նոր շորեր հագցնելով ճանապարհ են ձգում դէպի յետ:

Անյաջող կերպով փորձում է նա նաւով վերադառնալ, ջուրը չի ընդունում նաւը և յետ է քշում դէպի ափ: Այդ բանի առաջն առնելու համար կնոջ խնդրով

Ուտնապիշտիմը ցոյց է տալիս նրան մի խորհրդաւոր բոյս-
որ պէտք է ծովի յատակից հանել: Գիլգամէշը մտնում է
ծովի տակը, յաջողութեամբ գտնում է բոյսը և կարծե-
լով, որ կենքի ծաղիկն է գտել, ուրախ վերադառնում է,
որովհետեւ ջուրը այժմ, այդ բոյսի զօրութեամբ, ճանա-
պարհ էր տալիս: Բայց մի անգամ երբ նա դուրս էր
եկել ցամաք, և լուացւում էր աղբիւրի մօտ, մի օձ է
դուրս գալիս, գրաւուած հրաշալի բոյսի հոտից, և գողա-
նում է անգին բոյսը: Գիլգամէշը տխուր շարունակում է
իւր ճանապարհը ցամաքով, որովհետեւ առանց բոյսի նաւը
յառաջ չէր կնում, և վերջապէս հասնում է նաւորդի
հետ միասին Ուրուկ:

Վերջին 12-րդ տախտակի վրայ պատմուած է, թէ
լինչպէս փորձում է Գիլգամէշը ստորերկրեայ աշխարհի հետ
հաղորդակցութիւն ունենալ, Էաբանիի հետ խօսել կարո-
ղանալու համար: Մի Աստծուց դէպի մի ուրիշն է գնում
Գիլգամէշը, բայց ոչ ոք նրան չի լսում: Վերջապէս Էան
խղճում է նրան և հրամայում է ներգալին դուրս թող-
նել Էաբանիի հոգին հողմի նման: Գիլգամէշը կամենում է
նրանից լսել երկրի օրէնքը, Էաբանին սկզբում չի կամե-
նում նորա խնդիրը կատարել, որովհետեւ իւր պատմու-
թեամբ միայն տխրեցնել կարող է նրան. բայց ի վերջոյ
զիջանում է և նկարագրում է նրա համար մեռելներէ
պետութիւնը, որ բոլորովին ծածկուած է փոշիների մէջ
և ուր երջանիկ են միայն նրանք, որոնք հերոսական մա-
հով են մեռել ու պատուով թաղուել: Իսկ դժբաղդ նրանք,
որոնց զիալը անթաղ դաշտի վրայ է փնացել և որոնց հո-
գու համար ոչ ոք չի մտածում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0162758

Բ Ե Ր Բ Ե Ն Բ Ե Ա Ն Գ Ր Ա Գ Ա Ր Ա Ն

№ 1. Է. Բեղամի, Հարիւր տարուց յետոյ:

№ 2. Երուանդ վարդապետ, Բաբելոն և Ս. Գիրք:

Գ Ի Ն Ն Է 15 Կ Ո Պ Է Կ.

Դիմել էջմիածին, Ճեմարան.